ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> դեկտեմբերի 2013թ. N 422

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 16 թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ընդունած որոշումը՝ 2013 թվականի դեկտեմբերի 11-ին անցկացված մրցույթի վերաբերյալ.
2. Թույլատրել <<Հրաչյա և Տիգրան>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու <<Արմավիր-Բերքաշատ>> ավտոբուսային երթուղին 4 (չորս) տարի ժամկետով:
3. Դադարեցնել <<Էջմիածնի Բուատ>> բաց բաժնետիրական ընկերությանը <<Արմավիր-Փշատավան>>, <<Վաղարշապատ-Գայ>>, <<Վաղարշապատ - Արմավիր>>, <<Վաղարշապատ-Ամբերդ>>, <<Վաղարշապատ-Զվարթնոց>>, <<Վաղարշապատ-Տարոնիկ>> ավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքը:
4. <<Արմավիր-Փշատավան>> ավտոբուսային երթուղու սպասարկումը ժամանակավորապես թույլատրել իրականացնել <<Էջմիածնի Բուատ>> բաց բաժնետիրական ընկերությանը՝ մինչև սահմանված կարգով նոր մրցույթի կայացումը:
5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային <<Արմավիր-Փշատավան>>, <<Վաղարշապատ-Գայ>>, <<Վաղարշապատ - Արմավիր>>, <<Վաղարշապատ-Ամբերդ>>, <<Վաղարշապատ-Զվարթնոց>>, <<Վաղարշապատ-Տարոնիկ>> ավտոբուսային երթուղիների մրցույթ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի դեկտեմբերի 28-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***